(կազմված է 11.04.2022 թ. և բաղկացած է 12 թերթից)
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
հիմնադրելու մասին հիմնադրի
11.04.2022 թ. թիվ 1/169Լ որոշմամբ

Հիմնադրամի տնօրենի փոխ՝
Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"22" 04 2022թ.

գրանցման համար՝ 222.160.1233003

ՀՎՀՀ՝ 02861356

աշխատակից՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2022

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է էլեկտրոնային կամ թվային հասարակության ձևավորման, էլեկտրոնային տնտեսության խթանման, հասարակության թվային վերափոխման, սոցիալական, գիտական, հետազոտական, կրթական և սույն կանոնադրությամբ սահմանված այլ հանրօգուտ նպատակներ:

2. Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է (այսուհետ նաև՝ Կենտրոնական բանկ կամ Հիմնադիր): Հիմնադրի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6 (էլեկտրոնային հասցեն՝ info@cba.am):

3. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ օրինականության, ինքնակառավարման, իրավահավասարության, կամավորության, ղեկավարման կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

4. Հիմնադրամի պաշտոնական անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամ,

2) անգլերեն լրիվ՝ «Information Systems Agency of Armenia» Foundation,

3) ռուսերեն լրիվ՝ «Агенство информационных систем Армении» Фонд,

4) հայերեն կրճատ՝ ՀՏՀԳ,

5) անգլերեն կրճատ՝ ISAA,

6) ռուսերեն կրճատ՝ АИСА:

5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6:

6. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են հիմնադրամի անունից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

8. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ

գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

9. Հիմնադրամի պաշտոնական լեզուն հայերենն է: Հիմնադրամի կողմից պաշտոնապես կարող են օգտագործվել անգլերեն, ռուսերեն, ինչպես նաև այլ օտար լեզուներ՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

10. Հիմնադրամը կարող է ունենալ նաև ձևաթուղթ և խորհրդանիշ: Հիմնադրամի ձևաթուղթը նշումներ կարող է պարունակել Հիմնադրամի անվանման, գտնվելու վայրի, կապի միջոցների, համարների և հասցեների մասին: Հիմնադրամի ձևաթուղթը Հիմնադրամի մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց իրավասության սահմաններում օգտագործվում են Հիմնադրամից ելնող՝ երրորդ անձանց ուղղված փաստաթղթերի ձևակերպման համար:

11. Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով:

12. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից Հիմնադրամի ստացված միջոցները, ինչպես նաև Հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից, ուղղվում են միայն իր կանոնադրական նպատակների իրականացմանը:

13.Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

14.Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

15. Հիմնադրամի ֆինանսական տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի առաջին օրը և վերջանում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին օրը, բացառությամբ առաջին ֆինանսական տարվա, որը սկսվում է Հիմնադրամի գործունեության առաջին օրը:

16. Հիմնադրամն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում պետական գրանցման պահից և գործում է անժամկետ: Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտավորություններ:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

17. Հիմնադրամի նպատակներն են՝

1) էլեկտրոնային թվային հասարակության ձևավորման, էլեկտրոնային տնտեսության խթանման, հասարակության թվային վերափոխման աջակցում,

2) թվային նույնականացման գործընթացի բարելավում, հստակեցում և սահուն ապահովում,

3) կիբեռանվտանգության ոլորտում կարողությունների զարգացում և ենթակառուցվածքների ձևավորում,

4) տվյալների կառավարման և փոխգործելիության համակարգերի սահուն գործունության ապահովում՝ դրանց թվային և տեխնոլոգիական բաղադրիչների ամրապնդմամբ:

18. Իր նպատակներն իրագործելու համար Հիմնադրամը իր իրավասության շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության տվյալների փոխանակման և փոխգործելիության հարթակի գործարկում և շարունակական արդիականացում,

2) Հայաստանի Հանրապետության տվյալների փոխանակման և փոխգործելիության հարթակին միացած տեղեկատվական համակարգերի և փոխանակվող տվյալների ընթացակարգային ու վարչական տեղեկատվության շտեմարանների պահպանման կազմակերպում,

3) տվյալների և տեղեկատվական համակարգերի որակի հսկողության և համապատասխանության հսկողության ծառայությունների մատուցում,

4) էլեկտրոնային ընտրական համակարգի մշտական զարգացման և փորձարկման ապահովում,

5) հանրային հատվածի հաստատությունների ժամանակի դրոշմավորման միջնորդական ծառայությունների մատուցում,

6) թվային ազգային նույնականացման համակարգի ներդրման ապահովում,

7) նույնականացման գործիքների անվտանգության ու համապատասխանության ապահովում,

8) ազգային թվային ծառայությունների պորտալի (հարթակի) նախագծում և կառավարում,

9) տեղեկատվական անվտանգություն ստանդարտների շտեմարանի սահմանում,

10) կիբեռանվտանգության ոլորտում կարողությունների զարգացում և կիբեռանվտանգության ոլորտում բարձրագույն մակարդակի ապահովում,

11) Համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի (CERT-ի) ձևավորում և կառավարում,

12) կիբեռանվտանգության ոլորտում ճգնաժամերի կառավարում (ռեակտիվ),

13) կիբեռանվտանգության ոլորտում ճգնաժամերի տեխնիկական և կրթական կանխարգելում (պրոակտիվ),

14) հրապարակումների իրականացում, որոնք առնչվում են կիբեռանվտանգության ոլորտում ռիսկերի և սպառնալիքների գնահատմանը և դրանց իրագործելիության ուսումնասիրմանը,

15) իր նպատակների իրականացման համար տեխնիկական և ծրագրային ապահովման աշխատանքների իրականացում,

16) միջազգային փորձագետների և խորհրդատվական ընկերությունների ներգրավում,

17) կարողությունների ձևավորում և անհրաժեշտ մասնագետների ներգրավում,

18) հիմնադրամի նպատակներին համապատասխանող ծրագրերի աջակցում ու միջոցառումների իրականացում,

19) սույն կանոնադրությամբ նշված նպատակներից բխող ցանկացած այլ միջոցառումների կամ գործողությունների իրականացում:

19. Հիմնադրամն իր նպատակների իրականացման համար կարող է համագործակցել և գործընկերություն հաստատել այլ հիմնադրամների, կազմակերպությունների կամ պետական կառավարման մարմինների և այլ անձանց (մարմինների) հետ:

20. Հիմնադրամն իր նպատակների իրականացման համար անձամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն (62.09.0),
2) ձեռնարկատիրական և կառավարման այլ հարցերով խորհրդատվական գործունեություն (70.22),
3) խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում (62.02),
4) էլեկտրոնային համակարգերի նախագծում, թեստավորում և մշակում (62.02.1),
5) մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում (74.90.0):

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

21. Հիմնադրամի շահառուներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
2) Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք,
3) Հայաստանի Հանրապետությունը և համայնքները,
4) օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք,

որոնց օգտին, հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան, կարող են կատարվել կամ կատարվել են որոշակի վճարումներ, մատուցվել ծառայություններ կամ նրանց փոխանցվել հիմնադրամի գույքի որոշ մասը:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Պետական հաստատությունները, քաղաքացիներն ու կազմակերպությունները կարող են մասնակցել Հիմնադրամի գործունեությանը՝ կամավոր նվիրաբերություններ կատարելով, գույքն անհատույց օգտագործման հանձնելով, ինչպես նաև Հիմնադրամի գործունեության իրականացման ժամանակ կամավոր աշխատանքներ կատարելով:

23. Հիմնադրամը կանոնադրական նպատակներն իրականացնելու համար գործող օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին,
2) ստանալու անհրաժեշտ տեղեկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից իր կանոնադրական նպատակների իրականացման համար,
3) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ,
4) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակից,
5) հիմնադրելու մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոց,
6) իրականացնելու օրենքով չարգելված ցանկացած այլ գործունեություն:

24. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև իր կանոնադրությանը համապատասխան,
2) հրապարակել ամենամյա հաշվետվություն իր գործունեության մասին,
3) օրենքով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում,

4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

5) ապահովել նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը,

6) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

25. Սույն կանոնադրության 29-րդ կետով նախատեսված անձանց, ինչպես նաև օրենքով լիազորված իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է հնգօրյա ժամկետում նրանց ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Հիմնադրամը պարտավոր է այդ անձանց պահանջով տրամադրել կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող դրա պատրաստման ծախսերից ավելի մեծ լինել: Օրենքով լիազորված իրավասու պետական մարմիններին նշված փաստաթղթերը տրամադրվում են անվճար:

V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՆՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

26. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադրամին որպես սկզբնական միջոց հիմնադիրների կողմից հանձնված գույքը, ինչպես նաև ֆինանսական միջոցները Հիմնադրամի սեփականությունն են: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

27. Հիմնադրամի միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

1) հիմնադիրների ներդրումները,

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների կամավոր նվիրատվությունները և նվիրաբերությունները,

3) ոչ բյուջետային դրամական մուտքերը,

4) Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

5) դրամաշնորհները,

6) տարբեր գիտակրթական ֆոնդերի կողմից ֆինանսավորումը,

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

28. Հիմնադրամի կողմից ստեղծված կամ ձեռք բերված կամ քաղաքացիների, կազմակերպությունների կողմից Հիմնադրամին ի սեփականություն հանձնած գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, բաժնետոմսերը, այլ արժեթղթեր և մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ փոխանցված իրավունքները Հիմնադրամի սեփականությունն են:

29. Հիմնադրամի հիմնադիրների և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց ներդրումները և նվիրաբերությունները կարող են կատարվել ինչպես դրամական և գույքային տեսքով (այդ թվում՝ սարքավորումներ, շենքեր, շինություններ, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ), այնպես էլ գույքի նկատմամբ գույքային իրավունքների տեսքով:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

30. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը,

2) Հիմնադրամի տնօրենը:

31. Հիմնադրամն ունի հասարակական հիմունքներով գործող ներքին աուդիտի և ոլորտային խորհրդատվական հանձնաժողովներ (այսուհետ՝ խորհրդատվական հանձնաժողովներ): Խորհրդատվական հանձնաժողովների ցանկը, դրանց կազմավորման կարգը, իրավասության հարցերի շրջանակը և եզրակացություններ ներկայացնելու ընթացակարգը և այլ հարցերը սահմանում է հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվող՝ Հիմնադրամի համապատասխան ներքին կանոնակարգերով:

32. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդը բաղկացած է 3 անդամից: Խորհրդի նախագահը և անդամները նշանակվում են հիմնադրի որոշմամբ: Խորհրդի անհատական կազմը հաստատում է հիմնադիրը՝

1) երկուսին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առաջադրմամբ,

2) մեկին՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջադրմամբ:

Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք: Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը և մյուս անդամները չեն համարվում Հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

33. Հոգաբարձուների խորհրդի առաջին կազմը ձևավորվում է Հիմնադրամի հիմնադրի որոշմամբ, և անդամների լիազորությունները սկսվում են հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների նշանակման օրվան հաջորդող օրվանից, իսկ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին չնշանակելու դեպքում՝ Հիմնադրամի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի համապատասխան ծանուցումը (տեղեկացումը) ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

34.Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղի առկայության մասին տեղեկանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Հիմնադրամի տնօրենը տեղեկացնում է հիմնադիրներին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, Հիմնադրամի մարմիններին:

35. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնելու խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

3) ստանալու տեղեկություններ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

36. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին,

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Հիմնադրամի շահերից:

37. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա,

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

3) եթե դադարել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

5) հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

6) նրա մահվան դեպքում:

38. Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել Օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնելու Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ Օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ,

2) դիմելու դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

39. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

2) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

4) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

5) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

6) Հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

7) Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

8) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

9) տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

10) Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

11) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

12) Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

13) տարեկան մեկ անգամ տնօրենի հաշվետվությունների լսումը,

14) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

15) Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

16) Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

17) Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

18) Հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը,

19) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

40. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին երկու անգամ՝ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ խորհրդի նախագահի կողմից, այն ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

41. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

42. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

43. Տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ Հիմնադրամի վերակազմակերպման դեպքում որոշումն ընդունվում է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

44. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 7 օրվա ընթացքում, որը ստորագրում են խորհրդի նախագահը և տվյալ նիստի քարտուղարը:

45. Արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

2) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը,

3) նիստին մասնակցած անձանց (այդ թվում՝ կառավարման մարմնի անդամների) քանակը, անունները՝ նշելով Հիմնադրամում հոգաբարձուների խորհրդի անդամի կարգավիճակը կամ զբաղեցրած պաշտոնը,

4) նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

46. Հիմնադրամի մարմինների նիստերի արձանագրությունները կազմվում են հայերենով: Դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

47. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր՝ սույն կանոնադրության 39-րդ կետի 12-րդ ենթակետով նախատեսված՝ Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և սույն կանոնադրության 39-րդ կետի 3-րդ, 4-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ խորհրդին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար.

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը.

4) խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ՝ սույն կանոնադրության 37-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում:

48. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

49. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

50. Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է խորհուրդը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

51. Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը: Տնօրենը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը:

52. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված մեկ այլ անձ: Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

53. Տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոն գբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

54. Տնօրենը՝

1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

3) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր և կնքում Հիմնադրամի անունից գործարքներ,

4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

5) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, վարչակազմակերպական կառուցվածքն ու հաստիքացուցակը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները և այլ անհրաժեշտ փաստաթղթերն ու հաշվետվությունները,

6) սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեություն (այդ թվում՝ ձեռնարկատիրական) ծավալելու նպատակով պայմանագրային հարաբերություններ հաստատելու մասին որոշումն ընդունելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ այդ մասին էլեկտրոնային կարգով տեղեկացնում է խորհրդի բոլոր անդամներին, եթե այդ պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 10.000.000 (տասը) միլիոն ՀՀ դրամը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործարքը կամ պայմանագիրը նախատեսված է հիմնադրամի բյուջեով:

Խորհրդի անդամները նշված որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ ունենալու դեպքում այն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են տնօրենին: Տնօրենը առարկությունները և/կամ առաջարկությունները ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է նշված հարցի քննարկումը խորհրդում:

Տնօրենը խորհրդի անդամներից նշված որոշման նախագծի վերաբերյալ 3 աշխատանքային օրվա ընթացքում առարկություններ և առաջարկություններ չստանալու դեպքում կայացնում է պայմանագիր կնքելու մասին համապատասխան որոշումը և սահմանված կարգով և ժամկետներում կնքում այն.

7) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

8) բանկերում բացում է Հիմնադրամի բանկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

9) իրականացնում է ամենօրյա աշխատանքներ Հիմնադրամի խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ.

10) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսական և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

55. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել ինչպես հիմնադրի, այնպես էլ Հիմնադրամի խորհրդի կողմից՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կանոնադրության այդ փոփոխությունները չեն կարող վերաբերել Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին:

56. Եթե կանոնադրության պահպանումն անփոփոխ ձևով կարող է առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամն ստեղծելիս, կամ կանոնադրությունը չի փոփոխում նրա իրավասություն ունեցող մարմինը, կամ փոփոխությունները պետք է վերաբերեն Հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին, ապա փոփոխություններ կատարելու իրավունքն իրականացնում է դատարանը՝ Հիմնադրամի մարմինների կամ հիմնադիրների կամ օրենքի համաձայն ստեղծված հոգաբարձուների ժամանակավոր խորհրդի դիմումի հիման վրա:

VIII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

57. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն այլ հիմնադրամի միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով: Վերակազմակերպումը կատարվում է խորհրդի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

58. Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելու իրավունք ունի միայն դատարանը՝ ցանկացած շահագրգիռ անձի (այդ թվում՝ Հիմնադրամի) դիմումի համաձայն:

59. Հիմնադրամի լուծարումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

60. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո, երբ Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, Հիմնադրամի գույքն ուղղվում է նրա կանոնադրական նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

61. Հիմնադրամի գործունեության դադարման (վերակազմակերպման արդյունքում) դեպքում Հիմնադրամի բոլոր փաստաթղթերը (կառավարչական, ֆինանսատնտեսական, աշխատակազմի վերաբերյալ և այլն) փոխանցվում են իրավահաջորդ կազմակերպությանը:

62. Հիմնադրամի լուծարման դեպքում պահպանման ենթակա փաստաթղթերը հանձնվում են պետական արխիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

63. Հիմնադրամը միաձուլման ձևով վերակազմակերպվելու դեպքում համարվում է վերակազմակերպված՝ նոր ստեղծված հիմնադրամի պետական գրանցման պահից:

64. Հիմնադրամն այլ հիմնադրամի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս համարվում է վերակազմակերպված՝ հիմնադրամի գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրանցում կատարելու պահից:

65. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած՝ դրա մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: